ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչները կարծում են, որ միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգում պետությունների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են տարբեր գործոններով, որոնցից առանցքային կարևորություն ունեն պետությունների տիրապետության տակ առկա ներուժը և ազգային շահերի համար միջպետական մրցակցությունը: Եթե ներուժը դրսևորվում է որոշակի ցուցանիշների հարաբերակցության տեսքով, ապա մրցակցությունն արտահայտվում է միջպետական շփումներով հավասարակշռություն ապահովելով կամ դրա խախտմամբ՝ պատերազմով: Այս ելակետային չափորոշիչները բնութագրում են ինչպես միջպետական փոխհարաբերությունների գլոբալ համակարգը, այնպես էլ դրա տարածաշրջանային չափումը: Եթե ռեալիստների դրույթները տեղայնացնենք հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, ապա ուժային հարաբերակցության գնահատման մեջ մեթոդաբանական առումով պետք է հաշվի առնել երկու գործոն.

- ներուժի ստատիկ գնահատումն ու քանակական ցուցիչների հիմքով համեմատությունը չեն կարող արտացոլել ուժային հարաբերակցության առկա պատկերը, քանի որ կողմերի միջև ներուժային հարաբերակցության քանակական բաղադրիչներից պակաս կարևոր չեն որակական ցուցիչները,
- ուժային հարաբերակցության պատկերը ուրվագծելու համար գնահատման պարտադիր պայման պետք է դիտարկել երկու երկրների միջև հնարավոր ռազմական բախման՝ պատերազմի սցենարը:

Հարավային Կովկասում ՀՀ-ի և Ադրբեջանի հարաբերման բանալին Արցախյան հակամարտությունն է: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանը ռազմական կարողություններով գերազանցում է ՀՀ-ի ու Արցախի միացյալ ներուժին: Նման փաստը կարևոր է, հատկապես եթե հաշվի առնենք, որ պաշտոնական Բաքուն պարբերաբար հիշեցնում է Արցախյան հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու մտադրության մասին: Սակայն նշենք նաև, որ չնայած կողմերի ներուժի նման հարաբերակցությանը՝ այսօր տարածաշրջանում Ադրբեջանը ուժային հավասարակշռությունը խախտելու ակտիվ քայլեր չի ձեռնարկում: Սկսած

1994 թ. հրադադարից, բացառությամբ մի քանի ռազմական միջադեպերի և 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի, ՀՀ-ի ու Ադրբեջանի միջև ուժային հարաբերակցության և տարածաշրջանային հավասարակշռության խախտված փորձ ըստ էության չի եղել: Ռեալիստական տեսության դիրքերից նման իրավիճակը փաստում է, որ տարածաշրջանում տիրում է ուժային հավասարակշռության վիճակ:

Հավասարակշռության բնույթը՝ դրա հնարավոր խախտման հավանականությունը, ինչպես նաև հակամարտության կողմերի՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու հնարավորությունները հասկանալու համար դիտարկենք ու համեմատենք կողմերի տնտեսական ներուժի, ռազմական հզորության, մարդկային կապիտալի և անվտանգության ռազմավարության բաղադրիչները:

Արցախյան հակամարտության գոտում կողմերի ուժային հավասարակշռությունը ենթակա է ոչ միայն քանակական, այլև որակական չափումների: Եթե վերջինի վերաբերյալ հանրային տեղեկատվությունն առավել հասանելի է, ապա քանակական տվյալները սովորաբար գաղտնի են կամ ճշգրիտ չեն:

Կարծում ենք, որ Արցախյան հակամարտության հարցում ՀՀ գերխնդիրը 1992-94 թթ. պատերազմում ձեռք բերած արդյունքները նվազ կորուստներով լեգիտիմացնելն ու լեգալացնելն է: Մինչդեռ Ադրբեջանի պարագայում այդ շահերը բացահայտ ռևանշիստական են, որ պարունակում են նաև ներքաղաքական, իշխանապահպանման խնդիրներ: Այս համատեքստում եթե Ադրբեջանը ձգտում է իր ռազմական ներուժի բոլոր բաղադրիչներով հասնել քանակական ու որակական առավելության, ապա Հայաստանի/Արցախի մոտեցումն այս առումով այլ է: Արցախի ճանաչման իրավաքաղաքական բանակցային գործընթացին զուգահեռ՝ հայկական կողմը ռազմական ծախսերի կառավարումը կազմակերպում է՝ առաջնորդվելով առկա խնդիրների՝ առավելագույն օպտիմալ լուծումներ մշակելու ճանապարհով, այդ թվում՝ սեփական ռազմական քաղաքականության մեջ մեկտեղելով հավաքական անվտանգության ու նախահարձակ ինքնապաշտպանության հարացույցները:

Անդրադառնալով Արցախյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի ռազմական ներուժի հարաբերակցությանը՝ նշենք, որ դա բարդ և դժվար չափելի ցուցիչ է: Ռազմական ոլորտում ուժերի հարաբերակցության և դրա դինամիկայի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել մի շարք խորքային ցուցիչներ, որոնք են՝ զինված ուժերի քանակական տվյալները, սպառազինությունների քանակական ու որակական ցուցիչները, ռազմական ոլորտի ծախսերը, մարտունակության աստիճանը, օպերատիվ մակարդակում բանակային ստորաբաժանումների ու սպայական կազմի գործողությունների համակարգվածությունը և այլն:

Ռազմական հզորությունների գնահատման ամենից ընդհանուր ցուցիչը կողմերի զինված ուժերի (ԶՈՒ) քանակն է: Ըստ հրապարակված տվյալների՝ զինված ուժերի կազմում ընդգրկված են՝ Հայաստան՝ 49(46) հազ., Արցախ՝ 18-20 հազ., Ադրբեջան՝ 81 հազ.[1] զինծառայող: Այս հարաբերակցությունը փաստում է, որ թեպետ Ադրբեջանի բնակչությունը երեք անգամ ավելի է[2], սակայն զինծառայողների քանակով շոշափելի առավելություն չունի: Կարևոր է հաշվի առնել այն, որ, ի տարբերություն Ադրբեջանի, ՀՀ պետական սահմանի հայ-թուրքական և հայ-իրանական հատվածներում ծառայություն են իրականացնում ՌԴ սահմանապահ զորամիավորումները՝ ըստ 1997 թ. օգոստոսի 29-ի հայ-ռուսական «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի», որը 2010 թ. երկարաձգվեց ևս 49 տարով:

Ռազմական հարաբերակցության գնահատման հաջորդ կարևոր ցուցիչը կողմերի ԶՈՒ-ում սպառազինությունների հարաբերակցությունն է: Զինված ուժերում որոշել կողմերի սպառազինության տեսակները և չափը բարդ է, եթե չասենք անհնար: Որպես կանոն՝ այս պարագայում անհրաժեշտ տեղեկատվության հիմնական աղբյուր են միջազգային թեմատիկ զեկույցները[3], մամուլը, ՄԱԿ-ի սպառազինությունների շրջանառությունը կանոնակարգող փաստաթղթերը[4], պաշտոնական հայտարարությունները և երբեմն էլ «մասնավոր» բնույթի տեղեկատվությունը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ/Արցախի և Ադրբեջանի տրամադրության տակ առկա ընդհանուր սպառազինությունները

Սպառազինության տեսակներ	Հայաստան	Ադրբեջան	Արցախ
ԶՈՒ հիմնական տանկ	Т-72 և բարեփոխված տարբերակներ	Т-72, Т-90С, Т-55/54:	Т-72, Т-55
Հետևակի մարտական հիմնական	БМП-1, 2, БМД-1	БМП-1, БМП-2, БМП- 3М, БМД-1	БМП-1, БМД
Հիմնական զրահափոխադրիչներ	БТР-60, БТР-70, БТР-80А, МТЛБ, БРМ-1/К, БРДМ-2, ГАЗ-2975 «Тигр»	БТР-60, БТР-70, БТР-80А, БТР-Д, МТЛБ, «Marauder»/ «Matador», Sufa, Cobra,	БТР-70, БТР-80, МТЛБ,

[1] Կողմերի զինված ուժերի թվակազմի վերաբերյալ կան տարբեր տվյալներ. Ադրբեջան՝ 70-90 հազար, ՀՀ՝ 46-48 հազար, Արցախ՝ մինչև 20 հազար: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Минасян С.** Сдерживание в карабахском конфликте. Ер.: Институт Кавказа, 2016, էջ 266:

[2] Ադրբեջանի ազգաբնակչությունը կազմում է 10 101 070, ՀՀ-ի ազգաբնակչությունը՝ 3 059 609, https://countrymeters.info/ru, Արցախի բնակչությունը՝ 146 000 https://www.panorama.am/am/news/2017/07/04/Արցախի-բնակչության-թիվը/1802738

[3] Տե՛ս Military Balance report // https://www.iiss.org/publications/the-military-balance, SIPRI Arms Transfers Database // https://www.sipri.org/databases/armstransfers, Janes world armies // https://www.janes.com և այլն:

[4] Տե՛ս «The Global Reported Arms Trade», The UN Register of Conventional Arms // https://www.un.org/disarmament/convarms/register/

Ինքնագնաց հրետանային համակարգեր	2С1 «Гвоздика», 2С3 «Акация»	2С9 «Нона-С»,2С31 «Вена», 2С1«Гвоздика», 2С3«Акация», 2С19 «Мста-С», ATMOS 2000, 2С7 «Пион», «Luna», Rak-12, Т-107, Т-122,	2С1 «Гвоздика», 2С3 «Акация»
Քարշակվող հրետանային համակարգեր	Д-30, МТ-12, Д-1, 2А36 «Гиацинт-Б», Д -20, Д-44,	Д-30, Д-20, 2А36 «Гиацинт-Б», М-46, Д-44, МТ-12,	Д-1, Д-20, Д-30, МТ-12
Համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր	БМ-21 «Град», БМ-27 «Ураган», М-80, AR1A, Ն-2, «ТОС-1А», РСЗО 9К58 «Смерч»	БМ-21 «Град», БМ-27 «Ураган», БМ-30, РСЗО 9К58 «Смерч», ТОС-1А «Солнцепёк», Т-300 Kasırga, Т-122 SAKARYA, Т-107 «Boran», LAR-160, Lynx Extra, Lynx Grad LAR, RAK-12 «Plamen», В-200 «Полонез»	БМ-21 «Град»
Մարտավարական հրթիռային համակարգեր	9К79-1 «Точка-У», ОТРК 9К720 «Искандер-Э»[5]	9К79-1 «Точка-У»	9К72 «Эльбрус»
Ռազմական ինքնաթիռներ	Су-25К/25УБК, Aero L-39 39C Albatros, Як-52, Як-18, Ил-76М/ТД, А319СJ СУ-30СМ	МиГ-29МУ1/УБ, МиГ-25ПД(С)/РБ, МиГ-21, Су-5/25УБ, Су-17/17У, Су-24, Aero L-29 Delfin, Aero L-39 39C Albatros, Ан-12, Як-40	-
Ռազմական/ տրանսպորտային ուղղաթիռներ	Ми-2, Ми-8МТ, Ми-9, Ми-17-1В, Ми-24П/К/Р	Ми-2, Ми-8Т/МБ, Ми-17-1В, Ми-24/ Ми-24G Super Hind Mk. IV, Ми-35М, Ка-27/32, Bell - 412	Ми-24П
Անօդաչու թռչող սարքեր	«Կոունկ» 25-1, «Կոունկ» 25-2, «Բազե»	«Orbiter» 2M, «Aerostar», «Searcher» Mk II, «Heron», «Elbit Hermes» 450	«Կոունկ» 25-1, «Կոունկ» 25-2, «Բազե»
Հակաօդային պաշտպանության համակարգ	9К33М3 «Оса-АКМ», 9К35 «Стрела-10СВ», 2К11«Круг», 2К12М3 «Куб-М3», С-125 «Нева», С-300ПТ/ПС, ЗСУ-23-4 «Шилка», ЗУ-23-2, С-60, ПЗРК «Верба»	9К33-1Т «Оса», Т38 «Стилет», 9К37МБ «Бук-МБ», 9К35 «Стрела-10СВ», 9К332МЭ«Тор-М2Э», 2К11«Круг», С-125 «Печора-2ТМ»,С-200В «Вега», С-300ПМУ2 «Фаворит», Barak-8, ЗСУ-23-4 «Шилка», ЗУ-23-2, С-60, 9К32 «Стрела-2»/9К32М «Стрела-2М», 9К32 «Стрела-3»	9К33М3 «Оса-АКМ», 9К35 «Стрела-10СВ», ПЗРК «Верба, ПЗРК «Игла», 2К11«Круг», 2К12М3 «Куб-М3», С-125 «Нева», С-300, ЗСУ-23-4 «Шилка», ЗУ-23-2, С-60»

Սպառազինությունների վերը բերված աղյուսակը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ.

[5] Տե՛ս "Искандеры" навели на Баку // https://www.gazeta.ru/army/2017/02/22/1053951 5.shtml

1. Կողմերի զինտեխնիկայի զգալի մասը ռուսական է: Դա նշանակում է, որ նրանց սպառազինությունների հարաբերակցությունը կառավարելի է տարածաշրջանային գերտերության կողմից, այսինքն՝ ռազմական ընդհանուր մրցակցության վրա երրորդ կողմի ազդեցությունը շոշափելի է:

2. Երկու կողմերն էլ ունեն ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական զինանոց, որի միջոցով կարող են խոցել հակառակորդի՝ շփման գծին մերձակա, ինչպես նաև խորը թիկունքում (ներառյալ ռազմավարական նշանակության) տեղակայված օբյեկտներ և կենդանի ուժ:

3. Ռուսական սպառազինության գերակայությունը ենթադրում է, որ դրանց տեխնիկական սպասարկումը, մատակարարումները կառավարելի են լինելու ՌԴ-ի կողմից:

Նշենք նաև, որ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման համակարգի կարևոր բաղադրիչ է ՌԴ 102-րդ ռազմակայանը (անձնակազմի թիվը՝ 3.3 – 5000 հոգի), որը ՀԱՊԿ շրջանակներում երկկողմ ձևաչափով գործող ռազմական միավոր է և ապահովում է ՀՀ անվտանգությունը:

Կողմերի ուժային հարաբերակցության հաջորդ կարևոր ցուցիչը ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական հատկացումների չափն է: Ներկայումս ՀՀ-ն ռազմական կարիքների համար ծախսում է մոտ 437 մլն ԱՄՆ դոլար, Ադրբեջանը՝ 1,479 մլրդ: Դա արձանագրվել է շնորհիվ վերջին տասը տարիներին էներգակիրների վաճառքից ստացված ֆինանսական մուտքերի թռիչքային աճի (տե՛ս աղյուսակ 2): Անկախությունից ի վեր ռազմական ոլորտում ՀՀ-ի և Ադրբեջանի ընդհանուր ծախսերը կազմում են՝ համապատասխանաբար 4.042 և 19.6 մլրդ ԱՄՆ դոլար: Այսինքն՝ Բաքուն մոտ 4,85 անգամ ավել միջոցներ է հատկացրել ռազմական ոլորտին, քան Երևանը: Նշենք սակայն, որ փորձագիտական շրջանակներում կա կարծիք, թե Ադրբեջանում կոռուպցիայի հետևանքով ռազմական ոլորտի հատկացումներն օգտագործվում են ցածր արդյունավետությամբ: Անգամ այս պարագայում ակնհայտ է, որ նման դինամիկայի դեպքում քանակական առավելությունը ինչ-որ մի կետից հետո որակականի փոխվելու մեծ ռիսկ է պարունակում:

Ֆինանսական հատկացումների նման պատկերի պայմաններում հայկական կողմը հավասարակշռություն պահպանելու նպատակով գործում է ոչ թե սպառազինությունների մրցավազքի տրամաբանությամբ, այլ անվտանգության իր կարիքներից բխող պահանջներով: ՀՀ-ն վարում է ֆինանսական միջոցները հնարավորինս արդյունավետ տնօրինելու քաղաքականություն՝ գնելով անվտանգության կոնկրետ խնդիրներ լուծող սպառազինություն: Հենց այս նպատակով են 2015-16 թթ. ձեռք բերվել «Իսկանդեր» ՕՄՀՀ-ով հարձակողական զինատեսակը, ինչպես նաև 2018-19 թթ. ՌԴ-ից «СУ 30-СМ» կործանիչները:

Աղյուսակ 2

ՀՀ/Արցախի և Ադրբեջանի ռազմական ծախսերի հարաբերակցությունը տնտեսական հիմնական ցուցանիշների հետ[6]

Տարեթիվ	ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ					
	ՀԱՅԱՍՏԱՆ			ԱԴՐԲԵՋԱՆ		
	Ընդհանուր ծախսեր, մլն $	ՀՆԱ հարաբերակցությամբ ռազմական ծախսեր, %	Պետական բյուջեից ծախսեր %	Ընդհանուր ծախսեր, մլն $	ՀՆԱ հարաբերակցությամբ ռազմական ծախսեր, %	Պետական բյուջեից ծախսեր, %
2008	396	3,4	15,3	1,607	3,3	10,5
2009	359	4,2	14,6	1,473	3,3	9,6
2010	395	4,3	16,3	1,476	2,8	8,7
2011	391	3,9	15,4	3,079	4,7	13,9
2012	387	3,6	16,0	3,186	4,7	12,7
2013	404	4,0	16,8	3,527	4,5	12
2014	406	3,9	16,4	1,182	4,5	12,5
2015	436	4,2	16,1	1,194	5,5	14,1
2016	431	4,1	15,1	1,397	3,7	10,4
2017	437	4,0	15,5	1,479	3,9	10,4

Հավելենք, որ Ադրբեջանի հետ իր ռազմական բյուջեի անհամամասնությունը ՀՀ-ն փորձում է մեղմել միջպետական համաձայնագրերով ստացվող զինատեսակներով՝ որպես ՀԱՊԿ անդամ երկիր օգտվելով ՌԴ-ի տրամադրած վարկային միջոցներով ներքին գներով սպառազինություններ ձեռք բերելու ֆինանսական արտոնություններից: Այսինքն՝ համարժեք կամ նույն սպառազինությունների ձեռքբերման դեպքում ֆինանսական առումով հայկական կողմը համեմատաբար շահեկան վիճակում է: Սակայն փաստենք, որ, այնուամենայնիվ, ռազմական հատկացումների ներկա վիճակը և դինամիկայի պահպանումը ՀՀ-ի համար դառնում են խնդրահարույց և ստիպում քայլեր ձեռնարկել ռազմական կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ներդնել ռազմական անվտանգության նոր հարացույցներ, իրականացնել առավել ճկուն գործողություններ:

Ինչպես արդեն նշվեց, տարածաշրջանային ուժային հարաբերակցության վրա ազդող հաջորդ կարևորագույն գործոնը կողմերի տնտեսական ներուժն է և մարդկային կապիտալը: Առնվազն վերջին 10 տարիներին Ադրբեջանի ռազմական ծախսերը ավելացել են գրեթե տաս-

[6] Տվյալները վերցված են Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտի բազայից, http://www.sipri.org/databases

նապատիկ՝ շնորհիվ վառելիքաէներգետիկ ռեսուրսների: Պարզ է, որ Ադրբեջանի նավթին հայկական կողմը հակադրելու անհրաժեշտ տնտեսական միջոցներ չունի մանավանդ վերջին տարիներին երկրում տնտեսական աճի տեմպերի նվազման պարագայում: Դա, իհարկե, շոշափելի հարված է տարածաշրջանում մեր մրցակցային դիրքերին: Առավել լավ պատկերացնելու համար երկրների տնտեսական հզորությունների հարաբերակցման բնույթը, փորձենք մի քանի ցուցանիշներով դիտարկել այն (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ և Ադրբեջանի տնտեսական հիմնական ցուցանիշները[7]

Տարեթիվ	ՀԱՅԱՍՏԱՆ				ԱԴՐԲԵՋԱՆ			
	ՀՆԱ, մլրդ, $	Փոփոխություն, %	ՀՆԱ 1 շնչի հաշվով, $	Փոփոխություն, %	ՀՆԱ, մլրդ $	Փոփոխություն, %	ՀՆԱ 1շնչի հաշվով, $	Փոփոխություն, %
2018	12,41	7,58	4 149	7,57	45,42	10,09	4 569	8,78
2017	11,54	9,40	3 857	9,38	41,26	9,06	4 200	7,76
2016	10,55	-0,07	3 526	-0,08	37,83	-25,60	3 898	-26,46
2015	10,55	-9,10	3 529	-9,26	50,84	-32,42	5 300	-33,24
2014	11,61	4,40	3 889	4,21	75,24	1,46	7 939	0,17
2013	11,12	4,73	3 732	4,38	74,16	6,42	7 926	5,04
2012	10,62	4,70	3 576	4,63	69,69	5,60	7 546	4,18
2011	10,14	9,52	3 417	9,46	65,99	24,71	7 243	23,16
2010	9,26	7,08	3 122	7,21	52,91	19,47	5 881	18,47
2009	8,65	-25,84	2 912	-25,60	44,29	-9,58	4 964	-11,02
2008	11,66	26,68	3 913	27,10	48,98	48,02	5 579	46,10

Այս տվյալները վկայում են, որ Ադրբեջանի տնտեսական հաջողությունները պայմանավորված են էներգետիկ ռեսուրսների արդյունահանմամբ և արտահանմամբ: Սակայն, մյուս կողմից, գերշահութաբեր լինելուց զատ, այս գործոնը Ադրբեջանին դարձնում է խոցելի և միջազգային վառելիքաէներգետիկ շուկաներից կախված: Աղյուսակից պարզ երևում է, որ միջազգային շուկաներում 2008-2009 և 2014-2016 թթ. նավթի գնանկումը խիստ բացասական ազդեցություն ունեցավ Ադրբեջանի ՀՆԱ-ի վրա, որը կրճատվեց՝ համապատասխանաբար 32 և 25 %-ով: Այս համատեքստում նշենք, որ տարածաշրջանում պատերազմական գործողությունների պարագայում Ադրբեջանի՝ նավթ ու գազ տեղափոխող հաղորդուղիները (նավթամուղներ, գազամուղներ) դառնալու են թիրախ, իսկ դա մեծ ռիսկ է Ադրբեջանի տնտեսության համար առհասարակ: Հատկապես այժմ, երբ Ադրբեջանի իշխանությունները այդպես էլ չեն ձգտել շոշափելի արդյունքներ ապահովել տնտեսության դիվերսիֆիկացիայի, նավթային եկամուտները հասարակության ներսում ար-

[7] Տե՛ս Мировой Атлас Данных https://knoema.ru

դարացիորեն բաշխելու հարցերում, կանխատեսելի է, որ անկայունության դեպքում այդ երկիրն իսկապես լուրջ խնդիրներ կունենա:

Այնուամենայնիվ, Ադրբեջանի տնտեսական ցուցանիշներն ակնհայտ մրցունակ են, և ՀՀ-ի ու Արցախի իշխանություններն առավել ջանք պետք է գործադրեն տնտեսական բարեփոխումների և առկա դժվարին պայմաններում ազգային եկամուտը մեծացնելու ուղղությամբ: Փորձը վկայում է, որ նման դեպքերում ելքը ծառայությունների, տեխնոլոգիաների, մտավոր ներուժի գերակայությամբ արտադրական ոլորտների զարգացումն է, ինչն առաջին հերթին պահանջում է լուրջ ներդրումներ մարդկային կապիտալի մեջ, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում:

Մարդկային կապիտալի ու ժողովրդագրության ոլորտում Հայաստանը, որոշ չափով նաև Արցախը, վերջին 20 տարում լուրջ հետընթաց են արձանագրել: Ըստ ոլորտի մասնագետների հաշվարկների՝ ՀՀ-ի բնակչությունն անցած երկու տասնամյակների ընթացքում մոտ 1/3-ով կրճատվել է, ինչը լուրջ մարտահրավեր է պետության համար: Ի տարբերություն ՀՀ-ի՝ Ադրբեջանում գրանցվում է բնակչության աճ: Թեև միջազգային փորձագետները վստահեցնում են, որ Ադրբեջանի բնակչության 25-30 տոկոսը աշխատանքային միգրացիայի հետևանքով տեղափոխվել է արտերկիր, սակայն երկրի պաշտոնական վիճակագրությունն այդ մասին լռում է: ՄԱԿ-ի կանխատեսումներով՝ առաջիկայում Ադրբեջանում բնական աճի տեմպերը թեև կնվազեն, սակայն կունենան դրական միտում: Մինչդեռ ՀՀ-ում միջնաժամկետ կտրվածքով սպասվում է բնական աճի բացասական հաշվեկշիռ՝ պայմանավորված առաջին հերթին արտագաղթով (տե՛ս աղյուսակ 4):

Ըստ աղյուսակ 4-ի, եթե Հայաստանի և Ադրբեջանի բնակչության՝ 19-64 տարեկան (աշխատունակ տարիքի) սեգմենտի հարաբերակցությունը 2010-ին 3.17 էր, ապա, ըստ կանխատեսումների, 2030-ին կկազմի 3.67: Սա Հայաստանում ինչպես ծնելիության տեմպերի նվազման, այնպես էլ արտագաղթի ու բնակչության ծերացման հետևանք է: Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ն արդեն կանգնած է կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ժողովրդագրական իրավիճակը հարթելու լուրջ մարտահրավերի առաջ: Ժողովրդագրական խնդրի լուծումը, անշուշտ, ուղղակիորեն կապված է նաև Արցախյան հակամարտության հետ. բացի նրանից, որ ցուցանիշների անկումը դժվարություններ է ստեղծում ինչպես տնտեսության, այնպես էլ զինված ուժերի համալրման համար, շարունակում է խնդիր մնալ Արցախի ազատագրված տարածքների բնակեցման հարցը: Շարունակական արտագաղթը ոչ միայն խոչընդոտում է երկրի կայուն զարգացումը, այլև ամենատարբեր ոլորտներում առաջատար մասնագետների արտահոսքի հետևանքով խնդիրներ է ստեղծում մարդկային կապիտալի մեջ ներդրումներ կատարելու գործընթացում: Մինչդեռ այդ ոլոր-

տը 21-րդ դարում պետությունների միջև ռազմավարական առավելություն ստանալու երաշխիքներից է:

Աղյուսակ 4

ՀՀ և Ադրբեջանի ընդհանուր և աշխատունակ տարիքի ազգաբնակչության տվյալներ[8]

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ				
Տարեթիվ	Հայաստան		Ադրբեջան	
	Բնակչություն մլն	15-64 տարեկան անձինք	Բնակչություն մլն	15-64 տարեկան անձինք
2000	3,076000	1973000	8118000	5141000
2005	3,015000	2005000	8563000	5786000
2010	2,963000	2043000	9095000	6492000
2015	2,989000	2073000	9613000	6939000
2020	2,991000	2048000	10030000	7109000
2025	2,989000	2023000	10309000	7193000
2030	2,970000	1978000	10474000	7261000

Տարածաշրջանային մրցակցության համատեքստում, բացի ռազմաքաղաքական, տնտեսական հզորության ու մարդկային կապիտալի ցուցիչներից, առանցքային է, թե կողմերն ինչ ռազմավարություն են որդեգրել Արցախյան հակամարտության շուրջ հնարավոր սրացման համատեքստում, և դա ինչ տեղ է զբաղեցնում նրանց վարած քաղաքականության մեջ:

Նշենք, որ Ադրբեջանը «Չմիացման շարժման»[9] անդամ երկիր է, չի անդամակցում ռազմաքաղաքական որևէ դաշինքի: Ռազմաքաղաքական անվտանգության հարացուցային չափումով Ադրբեջանը որդեգրել է հարձակողական հռետորաբանություն, որի առանցքը իր ազգային շահերի և հատկապես ԼՂ հարցի լուծման ռազմական սցենարը ոչ միայն չբացառելու, այլև հնարավորության դեպքում իրագործելու գործելաոճն է: Այս հարցում նա ակտիվ գործակցում է Թուրքիայի, Իսրայելի և շատ այլ երկրների հետ:

Հայեցակարգային առումով դիտարկելով ՀՀ ռազմական ու արտաքին քաղաքական իրողությունները՝ փաստենք, որ դրանք այսօր ածանցվում են մի քանի հիմնական հարացույցներից: Ներկայումս որպես ՀՀ ռազմաքաղաքական անվտանգության հարացույց կարելի է դիտարկել **«հավաքական անվտանգության» թեզը:** Այն ՀՀ ռազմական քաղաքականության մեջ արտահայտվում է ՀՀ-ի՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը անդամակցության և

[8] Տվյալները վերցված են ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի բազայից, http://esa.un.org/wpp/Excel-Data/population.htm

[9] Տե ս Движение неприсоединения, https://bigenc.ru/world_history/text/1942374

ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործակցության գործողությունների ծրագրի շրջանակներում համագործակցության տեսքով: Հայեցակարգային առումով ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «հավաքական անվտանգության» սկզբունքից, համաձայն որի՝ դաշինքի անդամ երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազմական) դիտարկվում է որպես հարձակում ողջ դաշինքի վրա: Հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել՝ հակադարձելու ընդհանուր սպառնալիքին: Թեպետ ֆորմալ առումով ՀԱՊԿ-ն հավաքական անվտանգության դասական համակարգ է, սակայն քաղաքական իրականության մեջ դաշինքի անդամների մոտեցումները երբեմն բավականին տարբերվում են միմյանցից. ՀԱՊԿ երկրների անվտանգության մոտեցումների ու ազգային շահերի զանազանությունը՝ «հավաքական անվտանգության» հարացույցի որոշ բաղադրիչներ դարձնում է ռիսկային ու ոչ բավարար արդյունավետ: Դա, օրինակ՝ ՀՀ-ի անվտանգության տեսանկյունից կարող է դրսևորվել ՀԱՊԿ որոշ անդամների կողմից դաշինքի անդամ հանդիսացող (ՀՀ-ի) ու չհանդիսացող (Ադրբեջանի) գործընկերների միջև հավասարության նշան դնելու կամ ՀԱՊԿ-ում իր դաշնակից երկրի ազգային շահերին հակասող ոլորտներում ակտիվ գործակցության տեսքով: Մյուս կողմից՝ հավաքական «անվտանգության» հարացույցի գործարկումը ՀՀ-ի ռազմական անվտանգության քաղաքականության մեջ Երևանին հնարավորություն է ընձեռում այն դիտարկելու որպես հակակշիռ Թուրքիայից սպասվող հնարավոր սպառնալիքներին, որի հիմնական օղակն է հայ-ռուսական ռազմական համագործակցությունը:

Նշենք, որ 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո ռազմական անվտանգության քաղաքականության հայկական մոտեցումը որոշակի փոփոխություններ կրեց, որն առավել հստակ ձևակերպվեց 2019 թ. ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանի՝ մարտի 29-ին Նյու Յորքում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ. «Ես՝ որպես պաշտպանության նախարար, ասում եմ, որ այդ ձևաչափը («տարածքներ՝ խաղաղության դիմաց» - Ա.Ղ.) չի լինելու, ես այն վերաձևակերպել եմ՝ «նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց»»[10]: Այս հայտարարությունն արձանագրում է, որ ՀՀ-ն ոչ միայն խաղաղության դիմաց որևէ զիջում անելու, այլև եթե հակառակորդը փորձի Արցախյան հիմնահարցի լուծման ռազմական քայլեր ձեռնարկել, առաջնորդվելու է «նախահարձակ ինքնապաշտպանության» սկզբունքով՝ իրական վտանգի առկայության դեպքում իրեն իրավունք վերապահելով նախահարձակ լինել՝ ձախողելու հակառակորդի մտադրությունները:

[10] «Նոր պատերազմ՝ նոր տարածքներ». Դավիթ Տոնոյանի հայտարարությունը Նյու Յորքում / https://www.1in.am/2532807.html

«Նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցը «պետության իրավունքն ու մեխանիզմն է, ռազմական անվտանգության իր կարիքներից ելնելով, նախահարձակ ռազմական ուժ կիրառել՝ վերացնելու իրեն անմիջականորեն սպառնացող վտանգի աղբյուրը»[11]: Նշյալ հարացույցը կիրառելի է ռազմական հակամարտության պարագայում, երբ հնարավոր է հավաստի նշել իրական վտանգի աղբյուրը, ուստի նաև համարժեք արձագանքել դրան: Միջազգային իրավունքի տեսանկյունից «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցին պետությունները հանգում են ՄԱԿ-ի կանոնադրության 51 հոդվածի պահանջների բավարարման դեպքում, երբ առկա է պետության ռազմական անվտանգության հստակ սպառնալիք հարձակողական գործողության տեսքով[12]: Միջազգային իրավունքի մեկնաբանությունից զատ՝ «նախահարձակ ինքնապաշտպանության» հայեցակարգը ունի նաև սոցիալ-քաղաքական, հոգեբանական և ռազմատեխնիկական չափումներ, որոնց պատշաճ ապահովման պարագայում է միայն այն արդյունավետ կիրառելի:

Արցախի ազգաբնակչության անվտանգության ապահովման առաջնահերթության իրողությամբ Ադրբեջանի հետ գտնվելով ռազմական հակամարտության մեջ՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման դիսկուրսում «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցի մուտքը կարող է բավարար չափով հիմնավորված լինել մի քանի իրողությամբ.

- 2000-ականներից ի վեր 1994 թ. կնքված հրադադարի համաձայնագրի խախտումների աճը, «պասիվ պատերազմի», ապա նաև ապրիլյան ռազմական հարձակման նոր գործելաոճի կիրառումը Արցախ-Ադրբեջան շփման գծում,
- Ադրբեջանի՝ սեփական զինված ուժերի կատարելագործման ու զինտեխնիկայի աննախադեպ ծավալների ձեռքբերման քաղաքականությունը,
- ԵԱՀԿ Մինսկի բանակցային գործընթացում Ադրբեջանի ոչ վստահելի վարքը, պայմանավորվածությունների դրժումը և միջնորդ կողմի՝ այդ վարքի գնահատման ոչ համարժեք հրապարակային գնահատականները,
- Ադրբեջանում պետական մակարդակով հայատյացության քաղաքականությունը և ԼՂ խնդրի լուծման ռազմական հռետորաբանությունը:

---

[11] **Синицына Ю.** Превентивная и упреждающая самооборона: Различия. Правомерность Применения // «Журнал международного права и международных отношений», М., 2009, №. 1, с. 9.

[12] Տե՛ս **Reisman M., Armstrong A.** The past and future of claim of preemptiveself-defense // Amer. j. of law. – Wash., 2006. – Vol. 100, № 3, էջ 525–550:

Վերոնշյալ հիմքերի ներքո «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցի ներդրումը ՀՀ ռազմական անվտանգության քաղաքականություն ենթադրում է մի շարք այլ՝ ոչ պակաս կարևոր գործողությունների ապահովում, որոնք առավել արդյունավետ կդարձնեն հարացույցի կիրարկումը իրական քաղաքականության մեջ: Ներկայացնենք դրանից մի քանիսը.

- Ադրբեջանի՝ ֆինանսապես առավել մրցունակ կարգավիճակի համատեքստում ՀՀ-ն չպետք է մտնի սպառազինությունների մրցավազքի մեջ, այլ պետք է առաջնորդվի զինտեխնիկայի ձեռքբերման խելամիտ հակաքայլերի մշակմամբ՝ շեշտը դնելով նաև սեփական ռազմարդյունաբերական համալիրի նորարարական լուծումներ գտնելու հնարավորության վրա:
- Արցախ-Ադրբեջան առաջնագծի տեխնիկական համալրման ու հակառակորդի զինված ստորաբաժանումների, զինտեխնիկայի տեղաշարժերի վաղ հավաստանշման համար անհրաժեշտ կանխարգելիչ հակաքայլերի մշակում:
- Հակառակորդի ռազմավարական օբյեկտներին կանխարգելիչ հարված հասցնելու ռազմատեխնիկական բավարար միջոցների առկայություն:
- Հայկական երկու պետությունները միացյալ հայրենիք, բնատարածք դիտարկելու գաղափարի հիմքով քարոզչական և տեղեկատվական անհրաժեշտ գործողությունների իրականացում արցախաբնակ ու հայաստանաբնակ քաղաքացիների շրջանում:

«Նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցի գործարկումը մի կողմից ենթադրում է զրկել հակառակորդին առաջին հարվածը հասցնելու հնարավորությունից և նախահարձակ լինելով՝ ճնշել նրա գործողությունների հետագա տարածումը, մյուս կողմից արդյունավետ գործարկման համար պահանջում է նյութատեխնիկական ու կազմակերպչական շոշափելի անհրաժեշտ ռեսուրսներ, խելացի լուծումներ, հետևողական ու թիրախային գործողություններ:

Ինչպես «հավաքական անվտանգության», այնպես էլ «նախահարձակ ինքնապաշտպանության» հարացույցները ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ ու, որպես պետության ռազմական անվտանգության հայեցակարգային հիմք, դրանցից որևէ մեկի ընտրությունը միանշանակ չէ: Այլ է իրավիճակը, եթե պետությունն ունակ է իր տիրապետած քաղաքական ու ռազմական ներուժը մեկտեղել անվտանգության կարիքներից բխող այդ հարացույցների բաղադրիչների հետ: Դա կարող է «միաձուլել» անհատական ու հավաքական անվտանգության սկզբունքները՝ հնարավորություն տալով պետությանը, ելնելով ռազմական քաղաքականության գերակայություններից, իրավիճակային ընտրություն կատարելու դրանց միջև:

Ամփոփելով արձանագրենք մի քանի իրողություն.

- Տարածաշրջանային ուժային հարաբերակցության համատեքստում ինչպես տնտեսական ներուժի, այնպես էլ մարդկային կապիտալի առումով ՀՀ/Արցախը զիջում է Ադրբեջանին: Այս փաստը լուրջ խնդիրներ է ստեղծում ՀՀ-ի և Արցախի ազգային անվտանգության ապահովման առումով, ուստի այս ուղղությամբ հրատապ քայլերի անհրաժեշտությունը կենսական է:
- Կողմերի ռազմական ներուժը որակական չափմամբ համադրելի է, սակայն քանակական չափումը ոչ միշտ է հնարավոր համեմատության ենթարկել, ուստի եթե կողմերի ռազմական ներուժի քանակական կողմն ընդգծված շեղում ունենա, ապա այն որոշակի փուլից հետո վերածվելու է որակական առավելության՝ այդ կերպ խախտելով ուժային հավասարակշռության առկա վիճակը:
- Մրցակից կողմերի ռազմաքաղաքական մոտեցումների հարացույցային չափումը փաստում է, որ հայկական կողմի պարագայում «հավաքական անվտանգության» ու «նախահարձակ ինքնապաշտպանության» թեզերի մեկտեղումը կարող է բավական արդյունավետ գործիք դառնալ Ադրբեջանի ռազմական հռետորաբանության ու ռազմական գործողություններ սանձազերծելու համատեքստում:
- Ուժային հարաբերակցության ներկա վիճակը, չնայած կողմերի ներուժային անհամամասնությանը, ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի դիրքերից կարող է բնորոշվել որպես ուժային հավասարակշռության վիճակ, քանզի կողմերից որևէ մեկը ակտիվ, այդ թվում ռազմական քայլեր չի ձեռնարկում՝ փոխելու ձևավորված ստատուս քվոն:
- Մեր կարծիքով, ուժային հավասարակշռության ամենից գործուն մեխանիզմը իրողություն կարող է դառնալ այն դեպքում, երբ առավելություն ունեցող կողմն արձանագրի, որ ռազմական գործողությունների նախաձեռնման դեպքում հնարավոր կորուստն ավելի շոշափելի կլինի, քան ձեռքբերումը:

Բանալի բառեր – *նախահարձակ ինքնապաշտպանություն, հավաքական անվտանգություն, հարացույց, ուժային հարաբերակցություն, ներուժ, ռազմաքաղաքական ներուժ, տնտեսական ներուժ, մարդկային կապիտալ*

АЛЕН ГЕВОНДЯН – ***Проблема армяно-азербайджанского силового соотношения в контексте обеспечения региональной стабильности.*** – В статье с опорой на методику американской школы политического реализма проанализирован потенциал Армении/Арцаха и Азербайджана и его ключевые составляющие. В частности, сравниваются военная мощь сторон, соотношение экономических ресурсов, демографическая ситуация и методы осуществления государственной политики безопасности. Констатируется: хотя сравнение по всем параметрам складывается не в пользу Армении/Арцаха, следует всё-таки говорить о балансе сил в регионе. Обусловлена ситуация тем, что ни одна из сторон не предпринимает активных шагов, чтобы изменить статус-кво. Подлинное же равнове-

сие установится, когда стороны осознают, что изменение статус-кво военным путём чревато скорее потерями, чем достижениями.

Ключевые слова: *коллективная безопасность, равновесие сил, военно-политический потенциал, экономический потенциал, человеческий капитал, превентивная самооборона*

ALEN GHEVONDYAN – *The Issue of the Balance of Power between Armenia and Azerbaijan in the Context of Regional Stability.* – The article analyzes the main elements of the capacity of Armenia/Artsakh and Azerbaijan based on the methodology of the American School of Political Realism. Particularly, the articles compare the data on military power, economic power, demographic situation and the methods of state policy. We thoroughly observe that although the data are not on the side of Armenia and Artsakh, there is an established balance in the region, as none of the sides act to change the existing status quo power. In this regard, we observe that the real balance will be established only if each of the sides accepts that the change of the status quo by military means will bring more loss than achievements.

Key words: *collective security, balance of power, paradigm, capacity, political-military potential, economic potential, human resource, preemptive self-defence*

Ներկայացվել է՝ 27.05.2019
Գրախոսվել է՝ 26.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019